«ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
27 մարտի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2001 թվականի N 239
քաղ. Երևան

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Համաձայն Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 34, 35, 48 և 49-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հաստատել՝

ա) «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը (կցվում է).

բ) «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը (կցվում է):

Սահմանել, որ վերամշակման նպատակով Հայաստանի Հանրապետություն ժամանակավոր ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր արտահանվող՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստի (ապրանքային ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 7102) և թանկարժեք (բացի ալմաստից) ու կիսաթանկարժեք՝ մշակված կամ չմշակված, տեսակավորված կամ չտեսակավորված, բայց չշարված, չշրջանակված և չամրացված, չտեսակավորված թանկարժեք (բացի ալմաստից) ու կիսաթանկարժեք՝ փոխադրման հարմարավետության նպատակով ժամանակավոր շարված քարերի համար (ապրանքային ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի՝ 7103) մաքսային ձևակերպումները թույլատրվում է կատարել «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» և «Արտահանում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմներով:

(Որոշումը լրաց. 02.06.01 N 485, 22.01.09 N 79-Ն)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
մարտի 27-ի N 239 որոշմամբ

Կ Ա Ր Գ[ուղղ.]

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ

(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում է «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև

վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը՝ բացառությամբ մշակութային արժեքների:

Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման կարգը սահմանելու մասին» N 827-Ն որոշմամբ:

(1-ին կետը լրաց. 22.01.09 N 79-Ն, 30.12.10 N 1750-Ն)

2. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է, ըստ արտադրական պրոցեսի, վերամշակման համար ներմուծված մեկ միավոր ապրանքի և տեղական ու այլ ապրանքների քանակությունից՝ բնաիրային, արժեքային չափման միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ:

Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է արտադրական պրոցեսի արդյունքում և չի հանդիսանում սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն:

(2-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

2.1. Թափոն է համարվում վերամշակումից գոյացած հումքի, նյութերի այն քանակությունը, որը կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունները և հնարավոր չէ օգտագործել որպես հումք՝ նմանատիպ կամ այլ արտադրական պրոցեսում: Մնացորդ է համարվում սույն կարգի 2-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված՝ վերամշակումից ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն չհանդիսացող՝ վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը չի կորցրել իր սկզբնական սպառողական հատկությունները:

(2.1-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

3. Հայտարարատուն Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարություն է ներկայացնում «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության հաշվարկը (հավելված N 1), որը հաշվարկվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

ա) արտադրողի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրով որոշված վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությամբ.

բ) արտադրողի կողմից հաստատված վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությամբ.

գ) պատվիրատուի կողմից հաստատված վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությամբ:

Նվազագույն քանակությունը հաշվարկելիս ցույց են տրվում նաև վերամշակման ընթացքում առաջացող թափոնների, մնացորդների և արտադրական կորուստների քանակությունները:

(3-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

4. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարությունն իր հրամանով սահմանված կարգի համաձայն, հայտարարատուի ներկայացրած հաշվարկի հիման վրա, 3-օրյա ժամկետում, տալիս է եզրակացություն (հավելված N 2):

5. Եզրակացություն ստանալու համար հայտարարատուն Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

դիմում (ձևը կցվում է),

պայմանագրի պատճենը, որում պետք է լինի նշում այն մասին, որ պայմանագրի կողմ հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը վերամշակումն իրականացնում է օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ օտարերկրյա ֆիզիկական անձանց պատվերով և իրենց կողմից տրամադրված հումքի, նյութերի ու կիսաֆաբրիկատների հիման վրա, և որ, վերամշակման արդյունքում ստացվող արտադրանքը պետք է հանձնվի պատվիրատուին կամ նրա կողմից նշված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող երրորդ անձին

«Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության հաշվարկը:

(5-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

6. Հայտարարատուն եզրակացություն ստանալու համար կարող է դիմել պայմանագրի կնքման պահից:

7. Եզրակացության ժամկետը սահմանվում է պայմանագրի գործողության ժամկետին համապատասխան:

8. Հայտարարատուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տեղեկությունների համար:

9. Եզրակացություն ստանալու մասին դիմումը կարող է մերժվել, եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի 3-րդ կետի պահանջներին:

10. Եզրակացություն տալու մերժման մասին 2-օրյա ժամկետում հայտնվում է դիմողին՝ նշելով մերժման հիմնավորումը:

11. Եզրակացություն տալու մերժումը դիմողը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Դիմումների և եզրակացությունների հաշվառման համար վարվում է հաշվառման գրանցամատյան:

Հավելված N 1
«ժամանակավոր ներմուծում՝
վերամշակման համար»
ռեժիմով ներմուծված
ապրանքների վերամշակումից
հետո ստացվելիք արդյունքի
նվազագույն քանակության
սահմանման կարգի

ՀԱՇՎԱՐԿ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ

(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԱԱ ԱՏԳ-ի	Նվազագույն քանակությունը ---------- չափման մեկ միավորի մեջ/չափման մեկ միավորից
1. Վերամշակման օբյեկտները այդ թվում՝ վերամշակման համար ներմուծված ապրանքներ տեղական ապրանքներ 2. Վերամշակման արդյունքը այդ թվում՝ ապրանքային արդյունքը թափոններ մնացորդներ արտադրական կորուստներ		

Հավելված N 2
«ժամանակավոր ներմուծում՝
վերամշակման համար»
ռեժիմով ներմուծված
ապրանքների վերամշակումից
հետո ստացվելիք արդյունքի
նվազագույն քանակության
սահմանման կարգի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Հայտարարատու _____
Հասցեն _____
Վերամշակման համար ապրանքի մատակարարը _____

Վերամշակման համար ներմուծված ապրանքները				Վերամշակման արդյունքը				
Անվանումը	ԱԱ ԱՏԳ ծածկագիրը	Չափի միավորը	Քանակությունը	Անվանումը	ԱԱ ԱՏԳ ծածկագիրը	Չափի միավորը	Քանակությունը	
							Ընդամենը	Չափման մեկ միավորի մեջ/չափման մեկ միավորից

Ծանոթագրություն. _____

Եզրակացություն տվողը՝ _____ _____ _____
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 200 թ.

Կ.Տ.

Զև

Դ Ի Մ Ո Ւ Մ

Դիմող _____
Կազմակերպության անվանումը _____
Հասցեն և հեռախոսահամարը _____
ի դեմս _____ -ի
Խնդրում եմ տալ եզրակացություն «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացնում են՝
1. Պայմանագրի պատճենը
2. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության հաշվարկը
3. Այլ փաստաթղթեր՝
_____
_____

Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

____ _____ 200 թ.

(Զևը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
մարտի 27-ի N 239 որոշմամբ

Կ Ա Ր Գ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ

(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

1. Սույն կարգով կարգավորվում է «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը:

(1-ին կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

2. «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է, ըստ արտադրական պրոցեսի, վերամշակման համար արտահանված մեկ միավոր ապրանքի և տեղական ու այլ ապրանքների քանակությունից՝ բնաիրային, արժեքային չափման միավորներով կամ տոկոսային արտահայտությամբ:

Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությունն այն քանակությունն է, որը գոյանում է արտադրական պրոցեսի արդյունքում և չի հանդիսանում սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն:

(2-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

2.1. Թափոն է համարվում վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը կորցրել է իր սկզբնական սպառողական հատկությունները և հնարավոր չէ օգտագործել որպես հումք՝ նմանատիպ կամ այլ արտադրական պրոցեսում: Մնացորդ է համարվում սույն կարգի 2-րդ կետի առաջին պարբերությամբ սահմանված՝ վերամշակումից ստացվելիք արդյունքի նվազագույն քանակություն չհանդիսացող՝ վերամշակումից գոյացած հումքի և նյութերի այն քանակությունը, որը չի կորցրել իր սկզբնական սպառողական հատկությունները:

(2.1 կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

3. Հայտարարատուն Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարություն է ներկայացնում «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության հաշվարկը (հավելված N 1), որը հաշվարկվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

ա) արտադրողի և պատվիրատուի միջև կնքված պայմանագրով որոշված վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությամբ.

բ) արտադրողի կողմից հաստատված վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությամբ.

գ) պատվիրատուի կողմից հաստատված վերամշակման արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակությամբ:

Նվազագույն քանակությունը հաշվարկելիս ցույց են տրվում նաև վերամշակման ընթացքում առաջացող թափոնների, մնացորդների և արտադրական կորուստների քանակությունները:

(3-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

4. Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարությունն իր հրամանով սահմանված կարգի համաձայն, հայտարարատուի ներկայացրած հաշվարկի հիման վրա, 3-օրյա ժամկետում, տալիս է եզրակացություն (հավելված N 2):

5. Եզրակացություն ստանալու համար հայտարարատուն Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարություն է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

դիմում (ձևը կցվում է),

պայմանագրի պատճենը,

«Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության հաշվարկը:

(5-րդ կետը լրաց. 22.01.09 N 79-Ն)

6. Հայտարարատուն եզրակացություն ստանալու համար կարող է դիմել պայմանագրի կնքման պահից:

7. Եզրակացության ժամկետը սահմանվում է պայմանագրի գործողության ժամկետին համապատասխան:

8. Հայտարարատուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տեղեկությունների համար:

9. Եզրակացություն ստանալու մասին դիմումը կարող է մերժվել, եթե ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի 3-րդ կետի պահանջներին:

10. Եզրակացություն տալու մերժման մասին 2-օրյա ժամկետում հայտնվում է դիմողին՝ նշելով մերժման հիմնավորումը:

11. Եզրակացություն տալու մերժումը դիմողը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Դիմումների և եզրակացությունների հաշվառման համար վարվում է հաշվառման գրանցամատյան:

Հավելված N 1
«Ժամանակավոր արտահանում՝
վերամշակման համար»
ռեժիմով արտահանված
ապրանքների վերամշակումից
հետո ստացվելիք արդյունքի
նվազագույն քանակության
սահմանման կարգի

ՀԱՇՎԱՐԿ

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ

(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Անվանումը	Ապրանքի ծածկագիրն ըստ ԱԱ ԱՏԳ-ի	Նվազագույն քանակությունը ---------- չափման մեկ միավորի մեջ/չափման մեկ միավորից
1. Վերամշակման օբյեկտները այդ թվում՝ վերամշակման համար արտահանված ապրանքներ տեղական ապրանքներ 2. Վերամշակման արդյունքը այդ թվում՝ ապրանքային արդյունքը թափոններ մնացորդներ արտադրական կորուստներ		

(Հավելվածը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Հավելված N 2
«Ժամանակավոր արտահանում՝
վերամշակման համար»
ռեժիմով արտահանված
ապրանքների վերամշակումից
հետո ստացվելիք արդյունքի
նվազագույն քանակության
սահմանման կարգի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՌԵԺԻՄՈՎ ԱՐՏԱՀԱՆՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(Վերնագիրը լրաց. 22.01.09 N 79-Ն)

Հայտարարատու ____
Հասցեն ____
Վերամշակման համար ապրանքի մատակարարը ____________________

Վերամշակման համար արտահանված ապրանքները				Վերամշակման արդյունքը				
Անվանումը	ԱԱ ԱՏԳ ծածկագիրը	Չափի միավորը	Քանակությունը	Անվանումը	ԱԱ ԱՏԳ ծածկագիրը	Չափի միավորը	Քանակությունը	
							Ընդամենը	Չափման մեկ միավորի մեջ/չափման մեկ միավորից

Ծանոթագրություն. ____________________________________

Եզրակացություն տվողը՝ ___________ ___________ _____________
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ ______________ 200 թ.

Կ.Տ.

Ձև

Դ Ի Մ ՈՒ Մ

Դիմող ____
Կազմակերպության անվանումը _______________________________
Հասցեն և հեռախոսահամարը _________________________________
ի դեմս ____ -ի
Խնդրում եմ տալ եզրակացություն «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության վերաբերյալ:
Դիմումին կից ներկայացնում եմ՝

1. Պայմանագրի պատճենը

2. «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության հաշվարկը

3. Այլ փաստաթղթեր՝

_____

_____

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)

____ _____ 200 թ.

(Հևը լրաց. 22.01.09 N 79-Ն)